ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEA1-7382-485C-83BA հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4911/02/26 ք. Երևան
11 Մայիսի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «Աքսել Մոնդրիան և գործընկերներ» ՓԲ ընկերության ընդդեմ «ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱ կազմակերպության՝ 06.04.2026թ.-ին «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 05.05.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող «ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱ կազմակերպության՝ «ԳԱԱՀԱԻ-ԳՀԾՁԲ-26/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 8-ի թիվ 15-1 որոշումը՝ 6-րդ չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 05.05.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 06.05.2026 թվականին:

I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱ կազմակերպությունից պահանջել ԳԱԱՀԱԻ-ԳՀԾՁԲ-26/3 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «Աքսել Մոնդրիան և գործընկերներ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ «ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱ կազմակերպության՝ 06.04.2026թ.-ին «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1-Ա որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. «ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱ կազմակերպությունից պահանջել ԳԱԱՀԱԻ-ԳՀԾՁԲ-26/3 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,

4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի հունիսի 23-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող՝ «ԳԱԱՀԱԻ-ԳՀԾՁԲ-26/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2026 թվականի թիվ N 1-Ա որոշման հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև որոշման կատարման՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգի պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը: Միևնույն ժամանակ պարզաբանել, որ վիճարկվող որոշման իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող են ներկայացվել միայն ապացույցները պահանջելու վերաբերյալ որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատասխանողը հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am